

America! Armenia Calls to Thee
խորագրով¹։

Ամերիկեան երեք թերթեր (Buffalo News, Chicago News և Post-Dispatch, St. Louis) մատենախօսական-ներ գրած են ԽԱՂԱՂՈՒԹԻԱՆ ԽՆԻԴԻՐ հատորիկին վրայ։

Պրֆալօի լրագիրը սապէս կը վերջացնէ իր խօսքը. — «Տարիներ յառաջ Պուլկա-րիոյ մէջ ի գործ դրուած անգլոսթիանց մասին կլէտսթընի յիշած մեծ ապացոյցը, իր արհաւիրքներուն և կոշտութիւններուն դուրսեմար, որոնք իրը վկայութիւն յառաջ բերուած են, աւելի զօրաւոր չեն քան այս գրքոյկին մէջ յիշուածները»։

Շիքագօի լրագիրը, գրքոյկին բովանդակութիւնը վերլուծելէ ետքը, կ'ըսէ — «Գրուած է այնպիսի մէկէ մը, որ տառապեր է և կ'զգայ. սարսուղի իր կողմէն է այդ»։

Իսկ Ս. Լուիզի թերթը կը գրէ. — Տիա-նա Աղաբեկ Արգար, տարագրութեան մէջ մաղարէտահի մըն է... Բոլոր պիտանի ծանօթութիւնները «Աշխարհի քաղաքա-կանութեան» և «պետութիւններու հա-մաձայնութեան» մասին, որոնք կրթիչ են, ձեռք են բերուած իր հայ արիւնա-կիցներուն ջարդերուն միջոցաւ... Ատիկա այնչափ իրական և կենդանի է իրեն հա-մար, որ երբ կը գրէ «Խաղաղութեան խնդրին» վրայ, Սիբրիլայէն աւելի ներ-շնչուած է և վալայէն աւելի՝ պերճա-խօս։ Ան գիտէ Հին և Նոր Կտակարան-ները, ինչպէս նաեւ աշխարհի քաղաքա-կանութիւնը, և երկուքին ալ շատ աւելի կը մօտենայ սրտի ծանօթութեամբ քան շատ մը դիւանագէտներ։ Նա խաղաղու-թիւն կը ջատագովէ յանուն Քրիստոնէու-թեան ընդդէմ «աշխարհի անէծքին — կայ-սերականութեան»։ Նա Քրիստոսի խօս-քերը էջ էջ վկայութեան կը բերէ Քրիս-տոնեաներուն այնպիսի խորին ջերմեան։

1. Այս գիրքուածին բնագիրն ու Հայերէն Թարգմա-նութիւնը կրճաւ կարգաւ փափագողներ Տարուսի 427րդ էջին վրայ.

գութեամբ մը, իրրե թէ ասոնք ունենային Միջազգային Օրինաց ոյժը։ Ետքը՝ յուսահատելով կը յայտարարէ, թէ որպէս զի «յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հանութիւն» ը թագաւորէ, ասոր միակ միջոցն է որ Քրիստոնեայը դառնան Քրիստոնէութեան։

Աշխարհի քաղաքականութեան ծանօ-թութիւն, բացարձակ անկեղծութիւն և բոցաշունչ պերճախօսութիւն կը կազմեն նկարագիրը այս ներշնչեալ կոչին»։

Կարելի չէ երկրայիլ թէ տիկ. Արգա-րեանի և իւր զուգակշիռներուն անմրցա-կից արդիւնքը ևս պիտի գնահատուի հիա-ցումով, Ապագայէն։

ՄԵՆԱՍԻՐ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՐԵՒՈՒ

Շար. Բ. Գլխոյ.

(Shu baqamqatq tş 341-1919)

Բոլորական խաւարման երևոյթը շատ տարբեր է ըստ դիտողութեան ժամանակ-ներու։

Արևային յուզումի պարբերութիւններու ժամանակ, պսակը բոլորովին կը պատէ աստղը, կարծես թէ Արեւը ընկզմած է զինքը ամէն կողմը շրջապատող խիտ մի-ջոցի մը մէջ։ Այսպիսի էր 1905ին խա-ւարման ժամանակ, ի Սիպքա տեսանելի պսակին ձեւը, ուր իմ պաշտօնիս ժամա-նակ կըցայ ուսումնասիրել և լուսանկարել երևոյթը։

Որչափ որ արևային յուզումները կը խաղաղին, տարածութիւնները և պսակին ցայտերը կը հեռանան Արեւու բնեռներէն և կը ծոխ մեղմով դէպ ի նուազ բարձ-րացած լայնութիւնները։ Այս ժամանակ պսակը կ'առնու տարտամ կերպով սուրբ Անդրէի խաչի մը ձեւը։ Ապա քիչ քիչ տարածութիւնները մէկմէկու կը մօտենան և երբ Արեւու մակերևոյթը հանդարտ

վիճակի մէջ է, սակայն միշտ յարաբերական, կը նմանի իմ 1900ին դիտած պսակին:

Լուսնոյ՝ Երկրիս վրայ ձգած ստուերով ծածկուած նեղ գոտիի պատճառաւ՝ Արեւու խաւարումները ինչ ինչ տեղերու մէջ խիստ ցանցաւ են:

Այսպէս Պարիս մի միայն ամբողջական խաւարումն ունեցաւ Ժէ դարուն, այն է 1654ին, նոյնպէս հատ մ'ալ Ժ՛ր դարուն 1724ին, և ԺԹ դարուն բնաւ չտեսնուեցաւ:

Քսաներորդ դարուն պարիսեան երկիրները պիտի ունենան երկու հետաքրքրական խաւարումներ: Մին 1912ին, 17 Ապրիլի՝, կէս օրին ժամանակները, միւսը 11 օգոստոսին 1999:

...

Եթէ այս խաւարումը բոլորական, է իր տևողութիւնը պարիսեան գաւառներուն մէջ երկու կամ երեք երկվայրկեան պիտի չանցնի:

...

Հաստատել օրէնքները, որ կը կառավարեն մեր մեծ կեդրոնական աստղը, ուսումնասիրել ձգիւնքները, անոր յուզումները և իր ջերմաքանակին որ կը ծածանին 6000էն 8000 աստիճանաց մէջ, նախատեսել ժամանակները յորում արեգակնային նիւթերը խտանալով պիտի տան աստղին սաստիկ ջերմութիւն մը, պիտի երեցնեն բիծերու երևոյթները, յառաջ պիտի բերեն աճում մը ջերմութեան՝ Երկրիս վրայ, առաւելութիւն մը գոլորշիացումներու ու վրանոսներուն, հոսում մը առատ անձրևներու, միով բանիւ փոփոխութիւնները մեր կլիմայի, այս է զլիաւոր դերն աստեղագիտին, որ կը դիտէ համբերութեամբ Արեւ. այս է նպատակն՝ զոր պէտք է ունենայ այս նոր գիտութիւնը, այսինքն արևային շնարանդիւնը. նա միայն մեզի թոյլ պիտի տայ շատ կանուխէն գուշակել

Թէ ինչ որ պիտ'ընէ, նա միայն պիտի կարենայ օր մը մեզի գծել երկրաւոր օգիւղաբանութեան մեծ օրէնքները:

(Շար.)

Թարգմ. Ի Թ. Մօրէոյ

ԾԱՆՈթՈՒԹԻՒՆ ԹԱՐԳՄԱՆՁԻ

1. Այս 70 քառաբիւր տակառաւափն կը դուրս 7 ևս. զարգացածով, որուն կը յաջորդէ քսան զրոյ, որպէս զի այս չափի ճիշդ զագագար մ'առնուն մեր ընթերցողները, այսինքն Թէ Արեւն աճէ երկվայրկեան մէջ սրբան ջերմութիւն կը սպառէ, և հետաքրքրաբար սրբափ նիւթ ընդունելու պէտք ունի դուրսն՝ այս սպառման տեղը լցնելու համար, որպէս զի կարենայ պահել իր ջերմութիւնը և լուսաւորել կեանքը, հետեւաւ ծանոթութիւնը զնկ պատշաճ դատեցինք ճիշդութիւնը գրութեանը վրայ: Պոյելիէտե եղաւ սառլինը, որ ուսումնասիրեց արեւաչափով (Pyrehéliometre) արեւու ջերմութեան սաստիկութիւնը: Այս կրողաւ և վիսլէ կատարելագործեցին Թորն օճը: Կը հետեւի սառնք աշխարհութենէ Թէ Երկրիս վրայ 1 քառակուսի մետր մակերես կ'ընդունի 0,4 ջերմաքանակ (calorie), մէն մի երկվայրկեան ժամանակի մէջ, եթէ գործիքը ուղղահայեաց դրուած ըլլայ արեւային ճառագայթներուն:

Ջերմաքանակ մ'է, ջերմութեան կարեւոր քանակութիւնը բարձրացնելու համար, 1 աստիճան սովորական բարձրաճանձութեան մէջ գտնուող հազարագրամ մը ջուրի ջերմութիւնը: Հաշիւ եղած է նաև ծծումբ՝ զոր օդու գունդը կը ծծէ արեւային ջերմութենէն. և այս 0,4 ջերմաքանակը կը ներկայացնէ ընդունած ջերմութեան քանակութիւնը 1 մետր քառակուսի վրայ՝ մէկ երկվայրկեան մէջ, արեւուն ճառագայթին օդին մէջէն անցնելու ժամանակ:

(Այս 0,4 ջ. Թիւ) երկվայրկեան մը մէջ և 1 մետր քառակուսի վրայ երեւակայութեան վրայ մեծ տպաւորութիւն չընեն, սակայն եթէ քիչ մը ուղադրութիւն ըլլուի՝ շուտով պիտի հասկցուի, Թէ հոս խնդիրն հսկայ արդիւնքի մը վրայ է:

Ջերմաքանակը դիւրաւ կը փոխուի ուժի, վասն զի ջերմաքանակ մը կը համապատասխանէ 425 հազարագրամի, և որովհետև 78 չգմ. մէկ երկվայրկեան մէջ յառաջ կը բերէ չղփի մը (cheval-vapeur), Արեւն մէկ մետր քառակուսի վրայ ընդունուած ջերմութիւնը, համազօր է այս կերպով 2,27 չղփի. ուրիշ բոլոր Երկրիս համար պիտ'ըլլայ 300000000000 չղփի. Այս է Արեւուն մեզի տուած ուժը, ուժ մը՝ որ զրոյի պիտի վերանուէր եթէ Արեւ մարէր:

Բայց նաև և առաջ այս ճառագայթացման սաստիկութիւնը պէտք է հաշուել, ոչ Թէ Երկրիս 149 միլիոն հեռաւորութեան վրայ, այլ նոյն իսկ Արեւուն երեսին վրայ: Այս ալ պարզ հաշիւ մ'է: Մարմին մը տեսանելի ըլլալու համար, 1' (մէկ ման) անկեւոր, պէտք է որ 3438 անգամ հեռաւորութեան վրայ գտնուի իր առաքածոցի չափով: Արդ՝ Արեւն կէս տրամագիծը մեզի կ'երեւի

1. Այս խաւարումն տեղի ունեցաւ, ոչ բոլորական էր և ոչ մասնկաւոր, այլ՝ մարգարտաշար տեսնուեցաւ: ԾԱՆՈթ. Թարգմ.

16' անկեմամբ, որոնք իր հետադուրսինը պիտի ըլլայ
 $\frac{3438}{16} = 215$ անգամ իր շառախդներուն:

Վերադիմաւ մետր մը քառակուսին՝ որուն վրայ կը
 գրին Արևը 0,4 շերտքանակ մէկ երկվայրկնի մէջ կը
 զատուէր մեր ցնտին վրայ, այսինքն արեւային շառախդ-
 ներու չափով 215 անգամ հնդի Արևու կերպոնէն: Եթէ
 փոխադրենք մէկ մետր քառակուսին Արևու մակերեսին
 վրայ, իր է 214 անգամ աւելի մօտ Արևու կեդրոնին,
 շերտքանակ սաստկութիւնը պիտի ըլլայ $(214)^2$ կամ
 46000 անգամ աւելի, այսինքն $(46000 \times 0,4) = 18400$
 շերտքանակ երկվայրկնի մէջ: Ուրեմն այս է շերտու-
 թեան քանակութիւնը, զոր Արևն իր մակերեսին իւրա-
 քանչեւր մետր քառակուսին զուրս կը սփռէ ամէն մէկ
 երկվայրկեան միջոցին մէջ:

Երեսն թէ թէ Արևուն շառախդը գրեթէ 109 անգամ
 Երկրէն շառախդէն մնն է, այսինքն թէ շատ 700000000
 մետր, կ'ունենանք Արևու մակերեսը՝ բազմապատկելով
 $\frac{22}{7}$ ու՛ր:

Այս Թուայ քառակուսին 4 ու՛ր է $\frac{22}{7}$ ու՛ր: Ապա պէտք է
 բազմապատկել նաև այս ելածը մետրներուն քառակու-
 սին՝ 18400 ու՛ր, և ելած թիւը կուտայ շերտքանակն քա-
 Նակութիւնը, այսինքն Արևու մակերեսն եղած և մի-
 ջոցի մէջ տարածուած շերտքանակն սաստկութիւնը: Եւ
 այս քառակուսին կրնանք ներկայացնել հետեւաւ Թու-
 ու՛ր. 113844000000000000000000 , այսինքն հարիւր
 տասն երեք հազար, երեք հարիւրքսասուսն չորս եռա-
 միլիոն շերտքանակ երկվայրկնի մէջ: Եւ մէկ տարուան
 սպասած քանակը գտնելու համար պէտք է բազմապատ-
 կել այս Թուի՝ տարւոյն՝ Արևու շառախդը երկվայրկնանէն,
 ըստ, այն է 86400, և ապա 365,24 ու՛ր, որ կուտայ
 շերտքանակ 3577 թիւին յաւելոյն 27 գրտին:

Հիմա մեր գիտին պիտի ըլլայ այս զօրաւոր շերտու-
 թեան աղբիւրը, մեր ծանօթ աղբիւրներու հետ բազմապատ-
 կել, այսինքն, ամուսին կամ կայծցարաթթուածին հետ (որ
 և Գալլիաքաղական Թթուտ կը կոչուի) այս վերջինս
 կ'ընտրուի, վառն զի տար այրուած շատ շերտութիւն
 առաջ կը բերէ: Գալլիաքաղական Թթուտը ըստ Եւրո-
 պացոց է (silicium et oxygène) բաղադրուել մարմին
 մ'է, որոնց խտնամասութիւնն է 28 ատ 32. և այրելով 1
 հազարապատ մայս խտնուորդէն կու տայ 3650 շերտքա-
 նակ, Միւս կողմէ, ծանօթ է մեր գարծնալ արևու զան-
 զուածն, և հետևաբար մէջը պարունակող Նիթրոց հա-
 զաբարաքանիկը թիւը, Ուրեմն եմթարելով որ Արևու
 մարմինը ըլլայ բազալցրեալ Գալլիաքաղական Թթուտէ,
 զիւրին է հաշուել շերտքանակն քանակութիւնը որ առաջ
 կու գայ այրմամբ այս աշտղին զանգուածին: Պարզ հաշու-
 րէ գտնուի թէ այս Նիթրոց բաղադրանքն Արևը 2000
 տարին պիտի չիլնանի: Հաշուը այսպէս կը գտնուի.
 Երկրին ծանրութիւնն է հազարապատմով 6063 շարուս-
 նակուած 21 գրտով, Արևու զանգուածն 830800 անգամ
 աւելի կը հեռէ Երկրէն: Այս երկու թիւերու արտա-
 դրեալը բազմապատկելով 3650 շերտքանակով, այսպէս
 $(6063 \times 10^{21} \times 830800 \times 3650)$, կ'ունենանք 7322՝
 շարունակուած 30 գրտինքով:

Այս է Արևու այրմամբ ծնած շերտութիւնը. Բաժնե-
 լով այս թիւս Արևու տարեկան սպասած շերտքանակով՝
 զոր վերը յիշատակեցինք, ստինքն է 3577 շերտքանակուած
 27 գրտով, կու տայ գրեթէ 2000 տարի: Արդ յայտնի
 է Նոյն թիւ պատմութեան վկայութեամբ, թէ Արևը 2000
 էն շատ աւելի տարիներէ ի վեր փայլած և շերտքանակ է
 գտնու, և ըստ երկրաբանութեան իր սեականութիւնը
 պէտք է հաշուել ոչ թէ հազարաւոր, այլ միլիոնաւոր
 տարիներով:

Հիմա որ ընդհանուր գաղափար մ'առինք, թէ՛ Արևուն
 զանգուածին վրայ, թէ՛ որովայն շերտքանակ կը սպառէ
 ամէն երկվայրկնի մէջ, և թէ՛ 3560 շերտքանակ ու-
 նենալու համար հարկաւոր է 1 հազարապատմով Գալլա-
 խածնական Թթուտու, Ուստի եթէ 3660 ու՛ր բաժնեկը
 Արևու երկվայրկնի մէջ սպասած շերտքանակը $(113344 \times 10^{21}, 3660) =$ կու տայ մեզի գրեթէ 31 եռամիլիոն
 Հզգ. Գալլիաքաղական Թթուտ:

Այս քառակուսին գաղափար էր մասու համար, հա-
 մարինք որ ըլլան բազմակի շոգոյ կառուածները, և
 ենթադրենք թէ ամէն մէկ կառու տանի 3100 Հզգ. ուստի
 31 եռամիլիոն Հզգ. գալլիաքաղական Թթուտը փոխա-
 դրելու համար զէպի Արև ամէն երկվայրկնի մէջ, պէտք
 է 10 միլիոն կառուածներ և իւրաքանչիւրը բաղադրանք
 հարիւր միլիոն կառուերէ, անա այսքան կառու պէտք է
 փոխադրելու համար. Իսկ թէ ամուսին ուղեղանք փոխա-
 դրել հեղինակին նշանակած Թուով, պէտք է 225 անգամ
 աւելի կառուածներ, այն է 225 միլիոն քառակուսի
 և իւրաքանչիւր 100 միլիոն կառուերէ բաղադրանք:

Բայց այս կառուածները երկինք մէջ ստուգել կան,
 զիտարներն է ամուսին Թիւը ատուներ, երկնաքարեր,
 որոնք անթիւ անհամար ցանուած ցրուած են երկնքի
 մէջ, Արևը իրեն ընթացքին մէջ անոնց պատահած ժա-
 մանակ իրեն իր ձգէ ինչպէս Երկրին իր կարգին: Արդ
 չիմար ի բաժնամբ շատ շերտութիւն կը ծնանի. արդէն
 Երկրէս վրայ իսկ օրինակներու կը հանդիպենք, երբ
 Թիւը աստղերը՝ երկրաւոր Թթուածնալ օդոյն մէջէն
 չփռուելով կ'անցնին, կը բռնկին, ասոնց երազութիւնը առ
 առաւելն կը հասնի 60 Հզգ. արդ ինչ պիտի ըլլայ
 տասնապատմով աւելի երազութեան արդիւնը: Որինքուհի
 էր բացատրենք. ենթադրենք մարմին մը Արևէն շատ
 հեռուն, որուն վրայ մեր օրուան աստղը զիտ նոր պիտի
 սկսի աղբեղութիւն ընել: Այս մարմինն ձգուելով մեր
 շերտքանակ Արեփին աղբեղութենէն, պիտի սկսի շարժիլ
 Նախ անաղբելի կերպով, ապա շարունակ կ'երազուի իր
 ընթացքը պիտի հասնի 600 Հզգ. երազութիւն վերջի
 երկվայրկնիէն: Արևու վրայ ինչպէս ժամանակ, Մի
 կարծէք թէ ըսածսն զիտ ենթադրութիւն մ'է. փէջ զազ-
 զիացի մնն աստղագետն՝ որ Թիւրոց այս աշխարհս այս
 դարուս սկիզբները, խոսելով 1843 ի զիտարներ վրայ
 կ'ընէր. «Թէ այս հեղե զիտարներն պիտի երկու ժամուան
 մէջ ըրջան ըլլաւ Արևուն մակերեսին շուրջը, գրեթէ
 ցերեւով, և ունէր իր արեամբընքն ժամանակ՝ անհա-
 տատակ երազութիւն մը, այսինքն թէ շատ 180 փարսեի
 երկվայրկնի մէջ, որ կ'ընեն $(150 \times 4000 = 600000)$ »:

Արդ երկու վրայ ինչոյ 1 Հզգ. ծանրութեան ունեցող

մարմնոյ մը կենդանի ուժը՝ ջերմութեան կը փոխուի բախմամբ, և այս թերմոէթերմը կ'ըստուի Հագարտցրա-ստմէտը: Էյս եթէ ինկած մարմնոյն կէս զանգուածը բազմապատկենք երազութեան քառակուսիով, այն է $(600000) \times \frac{1}{2}$ կ'ունենանք 180000000000, և եթէ այս թիւս 425 ուր բաժնենք, կ'ելլէ գրեթէ 44 միլիոն ջերմ-քանակ, որ կը ծնանի 1 Հզգ. մարմնոյ մը Արեւ վրայ անկումէն:

Այս հաշուով երկվայրկեան մէջ Արեւուն մակերեսի վրայ ենթադրեալ իննոց մարմիններու ծանրութիւնները եթէ հաւաքենք երեք ժամ 17 վայրկեան և երեսուն մանրերկրորդ, կ'ունենանք կշիռ մը ամբողջ 1 տանին, որ է Հզգ. 78 շարունակուած 21 գրոյով: Արդ եթէ ամէն երեք ժամ և 17 $\frac{1}{2}$ վայրկեան անգամ մը լուսին մը ինչայ Արեւ վրայ, պիտի լեցնէ Արեւուն սպառած ջերմութեան տեղը: Բայց արեգեւոյ մէջ կան շատ զաղտնիքներ, որ մեզի հասկնալի չեն և մեզի անծանօթ են. ասոնց կար-զէն է Զան աստղաց, ոչ մոլորակաց շարունակ վառ մնալուն պատճառները. և ինչ որ բացատրեցինք այժմ հասն ծանօթութիւններով է միայն.

Հ. ԽՈՐԷՆ ՍԻՆԱՆ

Shake off this downy sleep, death's counter-
feit, And look on death itself!

(Macbeth-Shakespeare)

□ □

Այո՛, պէտք է զարթնուլ խորունկ այս քունէն,
Եւ թըմրութեան վանել խաւարն, ոսկեղէն
Իտէլիի մը բաժակէն արբենալ,
Ատտուածներէն իսկ աւելի մեծ ըլլալ...
Ու տանջուիլ, աղբիւրն է՝ վիշա՛ք լոյսի.
Երազներուն խաւը կըրել մէկուսի
Մինչ արինոտ ու ծիրանի գողգոթան,
Հըպարտ ըլլալ և անտրտունջ յաւիտեան...
Ճառագայթով լեցուն ընիւ իր հոգին,
Յաղթմանակէ գեղեցկութիւնը կեանքին
Լոկ մահուան մէջ, ու փընտընէ հոն միայն
Երազներու գինովութիւնն անսահման:
Ու հաւատալ որ Մըտածումը կ'ապրի
Արշալոյսի մ'իբրև ծագումն հըրալի,
Բայց ան չարժեք մահուան հանգիստը խորին,
Հոն արփագեղ հորիզոններ կը բացուին՝
Զոր ոչ մէկ բան կը վըրդովէ, ոչ մէկ ձայն,
— Ո՛վ Մահ, լոյսի բոսորագեղ ծիածան...

ԱՐՑԷՆ-ԵՐԿԱՅ

« Երազներ ու ճառագայթներ »

ԱՆՅՆՈՂ ՏԱՐԻՒՆ

✽ ✽

Գարուն մըն ալ զոգն իր ողբով լի կ'անցնի
Ու արահետ մը կոյս-կեանքիս զընկով,
Արշալոյս մ'որ երեք կաթիլ մ'արիւնի
Զի դրաւ կապոյտ երկընքիս վրայ չողելով:

Լայն քղանցքիդ կառչած գիտ ո՛ր կը տանիս
Մոայլ միջոցի կըլափին մէջ վըհասոյդ,
Ո՛ւր կը տանիս, երբ ըսկիհին մէջ սըրտիս
Կարիճ մը մեծ կը սողոսկի լիհանոյդ:

Գըրջիս վըրայ նըլոյլ մը գիւ չըտեսաւ
Ամբոխն՝ որ վարն իմ երգերուս կը սպասէ.
Քնարիս վըրայ նըլազ մը դեռ չըղբաւ,
Եւ ողնացոյց քամակդ հոգիս է կ'ուզէ:

Կոյր թըռչանքիդ համբոյրն հեռու իմ գըլխէս
Մըտածումիս կըրող գինին հանգուցիչ,
Վաղը ինծի պիտի ըսեն « Ալեգէ՛ս,
Ա՛լ չունի սաղմը երգերու ծընուցիչ »:

Կ'անցնի քամիդ թափով մ'անհուն և ումպէտ,
Հէք մարդկութեան վըրայն թանձր ալիքի.
Ու կ'ազազէ կայծն հոգիին բոցակերտ,
Միբոյ ծարաւն, որ չուրթին վրայ կ'ընծիւղի:

Ամբոխն երէկ լոյս-ափունքին Ովկիանոս՝
Փեղ զըրկաբաց ու ծընրադիր ողջունեց.
Այսօր վազքիդ հուր՝ սարն ի վեր մահացու
Ոչընչութիւնը բազկին մէջ ծըրարեց:

Մեր պառաւներն ըսին, կորսուէ՛ դու բու մ'ես,
Դուն միւր երկրին անիծեալն ես կորսուէ՛,
Մեր ծինագէս լեռն ապաւէն չունի քեզ,
Դուն մեր Յեղին Պիղատոսն ես կորսուէ՛:

Համբոյրներով բեռնաւորուած քանինքր
Ըստուերիդ տակ երազներով հեշտացան,
Բայց թափառկոտ գնացքիդ, օրհնա սարսուռներ,
Հիւրանդ իրենց ուսէն թօթուել չըկըրցան:

Ու ալ կանցնիս, հայոյսաքի, օրհներգի
Կապոցներու և դէգերու վըրայէն...

Կը սողոսկի լոկ իբր յորձանք մ'ալիքի՝
Ոչինչն՝ հըսկայ մայր, դազապիկ ետեւէ:

Սև սարսափի աղօտ լոյսին մէջ հեռուն
Ափ մ'ըստալիս ծաղիկ սէրովը օծած
Գեղազանգուր Հայուհին՝ Ամանորին կը նետէ:

Հ. Ա. ՏԵՐԼԵՆ